

հ. Մեսրոպը աստուածաբանական գիտութեան ներկայացուցիչները զէմ, որ մենք «մարտել ենք» խղճի «նայն հանգստութեամբ», հետևեալն է. «Սկզբում նրան (Թորամանեանին) կարողութեան չափ օժանդակեց տեղի (Անիի) հ. Միքայէլ վարդապետը, որ անփորձ գիտական և աստուածբանական տեսութիւնները, պահել էր քրիստոնէական բարոյականութեան սրտառուչ հաւատարմութիւն»:

Այստեղ ի հարկէ տիեզերքի աստուածաբանները զէմ մի բան կայ ասուած, բայց մի՞թէ յերաւի այնպիսի բնաւորութիւն ունի այդ խօսքը, որ մենք անձնական վերաւորանք զգայինք և չթարգմանէինք հայ արուեստի և նրա աշխատաւորի համար այոքան գովեստով լի հեղինակաւոր մի վիպութիւն, մանաւանդ, երբ հաստատ գիտենք, որ պրոֆ. Մաւր բացի բարեկամական զգացմունքից, ոչինչ չունի մեր դէմ: Որպես՛ նուրբ պահանջներ ուրիշներից պատուաոիրութեա, մասին, երբ ինքը երկաթի ձեռնոցներով է մօտենում նոյն խնդրին:

Այս բոլորից պարզ է, որ հ. Մեսրոպը «զուր տեղը մեծ ազմուկ» է յարուցել և նրա վարմունքը, ամենամեղմ կերպով որակելով՝ անվայել է: Մենք չունինք հ. Մեսրոպի այն սրատեսութիւնն ու նրբազգածութիւնը, որ չեղած բաները տեսնենք և զգանք: Անպատշաճ է հ. Մեսրոպի կողմից նաև «քրիստոնէական խոնարհամտութիւն» բառերով ծաղրել մի վարդապետի. քրիստոնէական խոնարհամտութիւնը մի բարձր առաքինութիւն է, որին ձգտելը պատիւ կհամարէի ինձ համար, և կցանկայի, որ փոքր ինչ էլ հ. Մեսրոպի մէջ լինէր. այն ժամանակ շատ անտեղի և ի դուր անախորժութիւններից ազատ կլինէինք: 1)

Գարեգին վարդապետ

II

ԶԱՐԲԱՆԱԼԻ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ

Քննադատութեան օրինակելի և օգտակար գործը մեծաւ մասամբ մեղանում արդէն դարձել է մի սովորական «չուտ ասելիք» և ով իրեն ընդունակ է գտել

1) Տպագրելով հայր Գարեգին վարդապետի ներկայ նամակը անփոփոխ, ո՞նի ևս դարձուածների վայելչութեան պատասխանատուութիւնը թողնում ենք նամակագրի վրա:

«շուտ ասելիքի՝» նա իսկոյն իրեն յորջորջել է նաև քրն-
նագրան, մատենախօս և ընդ:

«Արարատ» ամսագրի հսկտեմբեր ամսի համարում
Ս. տառի տակ թագնուած մի պարօն, որը գլխարկ կա-
րողի նման աւելի շուտ հետաքրքրուել է գլխի շափուով,
քան մամուլի տեսութեան յանձնուած գրքոյկիս քննա-
դատութեամբ և ահա թէ ինչ է գրում յիշեալ պարօնը:

«Հայր հեղինակը իր երկասիրութիւնը առաջար-
կում է իբրև նիւթ խորհրդածութեան պսակի
«խորհրդի բարեփոխութեան, դժբաղդաբար մենք
«այնանդ ոչ մի նիւթ (ընդգծումը մերն է) չգտանք
«խորհրդածութեան համար»:

Պ. Ս., կամ մեր աշխատութիւնը միմիայն թերթել
է, և կամ դժուարացել է հասկանալու այն, որով և չէ գտել
ոչ մի նիւթ պսակի խորհրդի բարեփոխութեան համար:
Մենք կառաջարկէինք արդարութիւնը վերականգնելու հա-
մար մեր գրքոյքի երկրորդ բաժինը կարգալ և դատել թէ
կան խորհրդածութեան նիւթեր թէ ոչ:

Մենք խնդրում ենք «Արարատի» ընթերցողների ու-
շադրութունը գրախօս Ս-ի, հետևեալ նկատումների վե-
րաբերմամբ:

Պարօնը գրել է:

«Մենք չհասկացանք թէ ինչ նպատակին է ծա-
ռայում գրքոյկիս Ս. մասը— «ամուսնութիւնը
«ապգերի կեանքում» եթէ գրանով հեղինակը ուզե-
ցել է սոսկ ծանօթացնել թէ աշխարհումս ինչ
«տեսակ ամուսնութեան ձևեր կան, նա իր նպա-
«տակին չի հասել, որվհետև 50 էրեսի վերայ ար-
«ժարժել երկրագնդիս բոլոր ժողովրդների ամուս-
«նական սովորութիւնները, անկարելի է»: Մի քանի
տող ներքև՝ պարօնը աւելացնում է, «որ այդ մասը լի է
կոպիտ և գուհհիկ սխալներով, որօնք ցոյց են տալիս հե-
ղինակի տգիտութիւնը»:

Պատասխանում ենք:

Նախ՝ միջանկեալ ասենք, որ մեր պ. Ս., նոյն իսկ

հասարակ ուսուցչի համազգեստում, դարձեալ նրան ներելի չէ գրելու թէ «Մենք չհասկացանք թէ ինչ նպատակին է ծառայում գրքոյկիս առաջին մասը»:

Թող գիտնայ պ. Ս., որ «ինչ նպատակին» պարբերութիւնը յատուկ է թերուսին, իսկ փոքր ի շատէ ուղիղ մտածող անհատը, (էլ չեմ առում ստուգարանութիւն ուսած մարդը) կգրէր, «ինչ նպատակի» է ծառայում Անցնելով բուն խնդրին, մեզ մնում է իրօք դարմանալ, որ «Արարատում» քննադատ համարուող այդ թագստեան դիմող պարօնը՝ մտացութեան է տուել, որ իմ հեղինակած գրքոյկը կրում է. «ամուսնութիւնը ազգերի կեանքում» վերնագիրը և պարունակում է իւր մէջ միմիայն այն ազգերի պսակագրութեանց և հարսանեաց սովորութիւնները, որոնց մասին, բացի հայերից և սլաւեաններից՝ տակաւին մեր ազգագրութեան ժողովածուների մէջ ամփոփ տեղեկութիւններ չկան: Բայց թէ ինչո՞ւ պ. Ս., ամուսնութիւնը ազգերի կեանքում պարզ և հասկանալի նախադասութիւնը հասկացել է «բոլոր» ազգերի՝ և նոյն իսկ շեշտել է, որ «50-երեսների վերայ գրի առնել երկրագնաիս բոլոր ժողովրդների սովորութիւնները՝ անկարելի է», մեզ համար մնաց այս անբացադրելի և նոյն իսկ ակամայ ծիծաղելի «Այո, այլ բան էր, եթէ գրքիս վերնագիրը լինէր «ամուսնութիւնը աշխարհի բոլոր ազգերի կեանքում» թերիս իրաւունք ունէր պ. Ս., դարմանալու, որ 50 երեսի վերայ գրի առնել երկրագնաիս ազգերի ամուսնական սովորութիւնները՝ անկարելի է: Սակայն միթէ ես յանցաւոր եմ, որ քննադատ համարուող Ս., մասնաւորը ընդհանուրից տարբերել չգիտէ և «արժարժել» բայի միաբը և նշանակութիւնը տակաւին չէ հասկացել: Եւ ոչ թէ 50, այլ թէ 64 երեսների վերայ թարգմանաբար և քաղուածօրէն գրի եմ առնել և ոչ թէ «արժարժել» այս կամ այն ազգի ամուսնական կեանքի ձևերն ու ծէսերը, որոնք ունեցել են և նոյն իսկ պահում են նախապատմական ժամանակի ամուսնութեան ձևեր և ծէսեր, և ես այն իրաւամբ համարել եմ ամուսնութեան բնական շրջան»:

Գրքոյկիս առաջի գլխում, մենք գրել ենք պատմական տեսութիւն գեներիզմի, Պօլիսանդրայի, Պօլիգամիայի և կենակցութեան գաղտնի ձեւերի այն է Աղիւլսերա և Կօնկուրիցադա-ի մասին. բայց որ այս չէ ըմբռնել իմ գրախօս ծածկանուն պարտնը, դարձեալ ես չեմ մեղաւորը:

Քննադատ համարուածների շարքին պատկանում և պ. Ս-ը, չհասկանալով sqts բառի իսկական իմաստը, անխնայ գործադրած է ի վնաս իւր քննադատական կոչման: «Տգէտ» բառը նշանակում է անգրագէտ, ուսումն չառած, նոյն իսկ տխմար. (Безграмотный, неучъ, невежда). և համարել մէկին տգէտ, որը կրթական ցենդ ունի, սա արդէն կամաւ կուրանալ է նշանակում: Իսկ եթէ կարիք կայ մէկին նկատելու, որ նա այս կամ այն բանում անտեղեակ է և կամ անգիտակ, թող նման դէպքերում սովորեն և գործադրեն անգէտ (невеждащій) բառը, որ ամենաճիշտ թարգմանն է և կամ արտայայտիչը Անաչառ և ձեռնհաս քննադատը միայն կարող է վերլուծել այս կամ այն դրուածքը՝ տալով նրա թէ գրական և թէ բացասական կողմերը: Բայց Ս. քննադատը, նախ չէ կարողացել յսկանէ յանուանէ ցայց տալ մեր գրուածքի պակասաւոր կողմերը, որը իսկապէս ինձ համար միակ ձեռնտու և օգտուելու միջոցն էր, այլ նա ջանացել է բառախաղով ծաղր ու ծանակ դարձնել և գէրը և գրականութիւնը, որ պատիւ չի կարող բերել պ. Ս-ի նման քննադատներին:

Ներսէս Բահանայ Հերբիցեան

